ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Հրավերում առկա տեխնիկական վրիպակի վերաբերյալ

Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար՝ **ԿՄՀՔ-ՀԲՄԱՇՁԲ-25/49** ծածկագրով «ք. Հրազդան հարավային /Աղբյուրակ/ թաղամաս արևային ժամացույցով զբոսայգու վերանորոգման» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված հրատապ բաց մրցույթի հրավերում առկա է տեխնիկական վրիպակ, մասնավորապես՝ հրավերի 10.2-րդ կետում նշված է որակավորման ապահովման չափը հավասար է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գնման գնի 15 տոկոսին:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. 526-Ն որոշման 32-րդ կետի 1-ին մասի գ) ենթակետի՝ Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի ութսունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է գնման գնի տասնհինգ, իսկ **գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին**:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընդունել ի գիտություն, որ սույն ընթացակարգի շրջանակներում որակավորման ապահովման չափը պետք է հավասար լինի գնվելիք աշխատանքների գնման գնի 30 տոկոսին: